ՀՈԳԵԾՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

1954 թվականի դեկտեմբերի 11-ին, շաբաթ օր, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը վարդապետական չորս աստիճաններ շնորհեց Էջմիածնի միաբանության անդամ Կոմիտաս աբեղա Տեր-Ստեփանյանին։

Կոմիտաս վարդապետը ծնվել է 1925 թվականին Սիբիրում։ Նրա ծնողները բնիկ Զորք-Մարզպանցի են (Կիլիկիա)։ Հայր Կոմիտասի ավազանի անունն է Ստեփան։

Նա իր մանկությունն անց է կացրել Արևելյան Անդրկովկասի Սանաստանում, որի Թյուրքիայի կցման (1939 թ.) հետևանքով, գաղթել է Բեյրութ (Լիբանան)։

Նախնական կրթությունն ստացել է Արևելյան Անդրկովկասի ազգային Նուպարյան և Բեյրութի Աբգարյան դպրոցներում (1934—1940 թ. թ.)։

1940—1941 ուսումնական տարում ընդունվել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը, որի միջնակարգ դասընթացն ավարտել է 1945 թվականին և սարկավագ ձեռնադրվելով, մի տարի հետևել է Երուսաղեմի Ընծայարանին։

1947 թվականին ներգաղթել է Հայաստան և մի տարի տվրել Երևանի Երաժշտական տեխնիկումում։

1948 թվականի օգոստոսին, հրջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետը, ընդառաջելով դիմումին, իր սարկավագի կոչումով ընդունել է նրան որպես Ս. Էջմիածնի միաբան։

Ավելի քան երեք տարի որպես ավագ սարկավագ սպասարկելուց հետո Մայր Տաճարում, 1951 թվականի մարտ ամսի 18-ին աբեղա է ձեռնադրվել բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի կողմից, որ նկատի ունենալով նորընծայի կիրթ ու քաղցրալուր ձայնը, վերանվանել է նրան Կոմիտաս։

Հայր Կոմիտասը սպասարկել է Թբիլիսիի և Բաքվի հայոց եկեղեցիներում ու ներկայումս պաշտոնավարում է Ս. Էջմիածնի հոգևոր Ճեմարանում՝ որպես Կարգ ատվածպաշտության, Ժամակարգության և Եկեղեցական երգեցողության դասատու։